այնպէս նաւակը քսան ոտքի չափ բարձրացաւ :

— Բարեկամք, կանչեց տղեկը գըլխիրաց՝ իր երկու ընկերաց մէջ տեղ կանգուն կենալով, մեր օդային նաւուն բարեբաղդութիւն բերող անուն մը դընենք. Թող վիկտորիա կոչուի :

Զարհուրելի հուռռա մըն էր լցուեցաւ :

— կեցցէ Թագուհին. կեցցէ Անգղիա :

Այս ատենս օդապարկին վերելական ուժը սաստիկ կերպով կ'աճէր : Ֆէրկըսըն, Քէննըտի և Ճօյ յետին ողջոյն մը տուին իրենց բարեկամաց :

— Արձըկեցէք բոլորը, կանչեց տղեկը :

Եւ վիկտորիան արագաբար օդուն մէջ բարձրացաւ, մինչդեռ Բիզօղիւղին չորս Թնդանօթները որոտաձայն կը հնչէին :

Կը շարունակուի:

ՄԱՀ ԿԵՍԱՐՈՒ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես երես 189)

ՀԱՆԴԷՍ Գ

Խորհրդարան կամ տաճար խորհրդոց

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԲՐՈՒՏՈՍ, ԿԱՍՍԻՈՍ

Կաս. Ինձ Թուի եԹէ սակաւաւոր եղիցի մեզ այսօր այս ատեան :

Բր. Նաա է՝ եԹէ քաջաց իցէ : (Լռի տաղաղ) :

Կաս. Լսես, Բրուտէ, զաղաղակ ժողովրդեանն :

Բր. Եւ նոքա կարող են ձեռն տալ մեզ այսօր : Մոտալուտ 'ի վերայ կայ վտանգն :

Կաս. Սակայն ես կարի իմն աներկիւղ և անխռով տեսանեմ զքեզ :

Բր. Պոմպէոս և Կատոն ինձ հովանացին :

Կաս. Ահաւասիկ երևեցան պաշտօնեայք բռնաւորին :

Բր. Իսկ Կիմբրոս և Դեկիմոս.... :

Կաս. Ընդ նմա իսկ են. բարւոք և խորագիտութեամբ գործեցին զայդ :

Բր. ԵԹէ խորհեցայր արդեօք հեռացուցանել աստի զանօրէնն Անտոնիոս :

Կաս. Իմ բան եղեւալ է ընդ Մարկեղոսի և Մետէլոսի, զի յերկարագոյն նուագ կալցեն զնա արտաքոյ տաճարիս, եԹէ և պէտք ինչ իցեն՝ նաև բռնի ևս :

Բր. Ապա ամենայն ինչ կազմ է. կալցուք մեք զիւրաքանչիւր տեղի. (Նստին). վայրիկ մի ևս գիրկս ածցուք ազատուԹեան և միմեանց կամ կենօք և կամ մահուամբ. տեսցես ընդ հուպ, Կասսիէ, զյետին հնարս որդւոյ, և զհանդէս վերջին առն հռովմայեցւոյ :

Կաս. Ա՜հ, քաջդ, ակնարկուԹեան քում սպասեն ամենայն սուսերք :

ՏԵՍԱՐԱՆ Բ

ԿԵՍԱՐ պառկոտեալ, որ աստ մեռնի.

ԿԻՄԲՐՈՍ, ԴԵԿԻՄՈՍ և այլք 'ի սենեկապետաց.

և ամենայնքն յառնեն, մինչև բազմեալ ԿԵՍԱՐ :

Կես. Իսկ զիա՞րդ, զի՞նչ իրք իցեն, զի կարգեալ ժամն վաղու ևս անցեալ է, և կէս ծերակուտին հազիւ երևի... (Նստի) : Սակայն և ես անագանեցի քան զարժանն. ցաւ է ինձ, ո՛ պատկառելի ատեան, զի ապաժաման գտեալ եմ ու ձեզ սպասել : Սակայն առ ի՞նչ արդեօք մեծ կէս մասն ձեր ոչ է 'ի միջի :

(Լռութիւն)

Բր. Զայս ոք պատասխանի... ամենեցուն մեզ մերկապարանոց կայ պատճառն. ո՛չ իսկ և լռուԹիւն մեր գուշակէ քեզ զայդ, Կեսար : Սակայն եԹէ լսել կամիցիս, զորս միանգամ աստ առ քեզ տեսանես՝ յերկիւղէ գումարեցան. և զորս ոչ տեսանես՝ յերկիւղէ ցրուեցան :

Կես. Ոչ նոր ինչ է ինձ յանդգնուԹիւն Բրուտոսի, որպէս և ոչ քեզ մարդասէր ներողուԹիւն Կեսարու : Սակայն զուր մրցիս, զի ոչ եկի ես այսր մտանել ընդ քեզ 'ի պայքար.... :

Բր. Եւ ոչ 'ի զուր մեք յայպանել զքեզ. ոչ իմաստուն գործեցին՝ որ միանգամ 'ի բարենշան աւուրս ածացան 'ի մէնջ, և վրիպակ գործեն՝ որ յատենի աստ համրացեալ նստին. ես արդ լուծից զնոցա տարապարտ երկիւղն : Ո՞ն անդր եԹէ Կեսար չարիս նիւԹեսցէ 'ի սրտի իւրում 'ի վերայ հայրենեացս, զգԹուԹիւն իւր՝ զոր ինձ արդ 'ի դէմս ածէր՝ Թէպէտ և ոչ ինչ արժան իցէ այսուհետև ցուցանել առ իս, նա առ տառապեալ հայրենիս մեր դարձուցանէ : Կենդանի են անձինք մեր, եԹէ ոչ նոր իմն յաղԹանակ չքեղ քան զառաջինսն՝ կանգնեսցէ նա այսօր. զի եկն այսր յաղԹանակել անձին իւրում և նախանձու յաչաղկոտացն. ո՛ն և ո՛ն արասցեն ինձ դէքն, եԹէ ոչ 'ի սոյն իսկ գումարեաց նա զձեզ, զի ընտրեաց նա իւրոց քաղաքակցացն հաւասարել կամակար սրտի մտօք. սակայն և այնպէս ոչ ուրեք գտցի զուգական Կեսարու.... :

Կես. Կամէի ընդմիջել զբան քո...

Բր. Մի՛ ծանր ինչ Թուեսցի քեզ իմս. այն ինչ կարգեալ իմ պրետոր՝ իշխեմ զառաջս առնուլ բանից դիկտատորին. Բրուտոս այժմ մի անձն է ընդ Կեսարու. տեսանեմ զձեզ զարմացեալս, մայլ Թուին յաչս ձեր բանք իմ. արդ բանիւ լոկով լուսաւոր արարից. որդի եմ ես Կեսարու :

(Աղաղակ հիացման)

Բր. Արդարև հայր իմ է նա. արդ ես ինքն մեծապէս պանծացեալ եմ, զի Կեսար դիկտատոր՝ փոխեցաւ 'ի քաղաքացի:

(Ձայն ցնծութեան).

ԿԵՍ. Ճշմարտութեամբ իմ որդի է Բրուտոս. ես ինքնին յայտնեցի նմա զբանն. ճոռոմ բանքն, արիական սիրտ և աներկիւղ համարձակութիւն և գերազանց իմն փայլատակեալ նշոյլ 'ի դէմս նորա՝ իմ որդի հարազատ քարոզեն զԲրուտոս. վասն որոյ, ժողովուրդ Հռովմայ, ցանկացեալ և յետ իմ բարւոյ մասին զձեզ վիճակեցուցանել, յաջորդ այսր գահու զարժանին քան զիս ընտրեմ զԲրուտոս. տամ նմա և զամենայն օրէն պատուոյս և զիշխանութեան. երկրորդ Կեսար նա ձեզ յարիցէ:

Բր. Եւ ոչ Թշնամիք անգամ Բրուտոսի հաւատասցեն երբէք բանից ասացելոց: Կեսար զիւր իշխանութիւն ինձ Թողու, ո՛ Հռովմայեցիք. զայն իմս, եթէ որդւոյն աղաչանօք մերկասցի այսօր Կեսար յիշխանութենէ իւրմէ, և ազատութեամբ հանգուսցէ զՀռովմ:

(Ձայն ցնծութեան)

ԿԵՍ. Բաւ է արդ. պարտ է քեզ արդ լսել առաջի իմ իբրև որդի և կրտսեր հասակաւ: Լուարուք ինձ, արդ Կեսար խօսի. իմ եղեալ է 'ի մտի անդարձութեամբ գնալ ընդդէմ Պարթևաց. վաղիւ իմով բանակօք խաղամ ես յԱսիա. և զոր կանխաւն առիք յինէն հրաման՝ լի բովանդակ կատարեսցի ամենայն: Գերեալ իմ առ հասարակ զամենայն Թշնամիս Հռովմայ, դառնամ գամ անկանել 'ի ձեռս առելեաց իմոց. և յայնժամ զիա՞րդ և ախորժէ ընկալցի զիս Հռովմ, Թէպէտ դիկտատոր, Թէպէտ քաղաքացի, Թէպէտ և ոչինչ:

(Լռութիւն)

Բր. Ապաքէն ոչ հռովմայեցւոց, ոչ հօր և ոչ Կեսարու անգամ էին բանքն զոր լուաք. անօրէն հրաման է այդ ինքնակալի. այլ դու, հայր, լուր ինձ միանգամ, անսա ինձ. տես զարտասուս, տես զհառաչանս որդւոյդ, լուր ինձ. բովանդակ Հռովմ խօսի ընդ քեզ յիմ բերան. տես զԲրուտոս, այն՝ զոր ոչ ոք երբէք 'ի մարդկանէ ետես արտասուել կամ աղաչել. տես դու զնա ինքն առ ոտս քո. (ծունր դնէ). Բրուտոսի խնդրեա հայր լինել և ո՛չ Հռովմայ:

ԿԵՍ. Աղաչանք որ հրապարակագոյժ Թշնամանք իցեն՝ չեն ինձ լսելի. յոտն կաց և լուռ լեր: Ծպրհեցաւ սա բռնաւոր առնել զիս. սակայն եթէ էի արդեօք, ոչ կենդանի պահեալ էր իմ զդա, յամօթ առնել զիս դէմ յանդիման մեծի հրապարակիս: Խորհուրդ դիկտատորին պարտի կատարիլ. օգուտ Հռովմայ զայն պատուիրէ. և որ միանգամ ստամբակեալ հետեւեսցէ ինձ և կամ յերկուասցի, Թշնամի է նա Հռովմայ, ապստամբ և մատնիչ նորա:

Բր. Այժմ մեք հպատակեսցուք դիկտատորին որպէս արժանն է. (հանէ զսուրն, և դաւաճանքն յարձակին 'ի վերայ Կեսարու):

ԿԻՄԲ. Մեռի՛ր, բռնաւոր, սատակեաց:

ԿԱՍ. Հարից և ես:

ՈՄԱՆՔ. Ո՛հ, բարէ. ո՛ ատեան արիւնալից. (և ելանեն փախչին):

ԿԵՍ. Ա՜յ անօրէն դաւաճանք...

Բր. Ես միայն ոչ կարեմ հարկանել զդա:

ԿԵՍ. (Վիրաւոր անկեալ, և վերարկուաւն ծածկեալ զդէմս) Եւ դո՞ւ ես, որդեակ իմ Բրուտէ. ա՛հ, մեռանիմ աւասիկ:

Բր. Ո՛վ հայր իմ... ո՛վ Հռովմ...

ԿԻՄԲ. Ի ձայնէ փախստէիցն դիզանայ ժողովուրդն:

ԿԱՍ. Թող եկեսցէ ժողովուրդն. սատակեցաւ բռնաւորն. հապա, փութասցուք սատակել և զԱնտոնիոս. (ելանեն):

Կը շարունակուի:

ԲԱՆԱԼԻՔ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՑ

(Տես երես 191)

484 Ի՞նչ ըսել է Լուսակիզն: — Այս բառս կը նշանակէ մարմին մը՝ որուն մէջ պարունակուած է այնչափ ջերմութիւն՝ որով ինչուան գոյնն կը ճերմըկնայ:

(Ջերմութեամբ մարմինք կը սկըսին կարմըրնալ՝ 525 հարիւրամասնեայ բարեխառնութեան աստիճանին. իսկ ճերմակ գոյնը կ'ունենան 1300°ին. իսկ այս երկու սահմաններուն մէջ կան ուրիշ աստիճանք գոյներու, որոնք մասնաւոր ջերմութեան յատուկ աստիճաններ ունին:

Գոյն		Աստիճան ջերմութեան.
Կարմրուկ	»	525
Թուխ կարմիր	»	700
Բաց կեռասագոյն	»	800
Կեռասագոյն	»	900
Պայծառ կեռասագոյն . . .	»	1000
Մութ նարընջագոյն	»	1100
Պայծառ նարընջագոյն . . .	»	1200
Ճերմակ	»	1300

Ամենէն բարձր աստիճանի գտուած ջերմութիւնն է, 13,941° հարիւրամասնի:

485 Ինչո՞ւ համար բոցին կենդրոնն խաւարին է: — Որովհետև, նախ, պատրոյգէն բերուելով այս մասիս մէջ կը գտնուին կազեր՝ որ դեռ չեն այրած: — Բ. Հոն կը գտնուի նաև ածխուկի քանակութիւն մը նոյնպէս դեռ չըսպառած:

486 Ինչո՞ւ համար բոցին կենդրոնին մէջ կազերն չեն այրիր: — Որովհետև բոցին արտաքին շրջանակն զանոնք անհաղորդ կ'ընէ օդուն Թթուածնին հետ, առանց որոյ կիզումն չի կրնար ըլլալ: